



The U.S. Embassy in Armenia



ՀԱՄԱՆԿԱՐԱՆՅԻՆ ՊՆՏՄՈՒՅԵԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՄՈՑՈՒՄՆԵՐԻ  
ARMENIAN ASSOCIATION OF WORLD HISTORY



# ԱՄՆ-Ի ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿԱԳԻՐ- 240

*Միջազգային գիտաժողով*

ՁԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՀԱԿԻՐՃԱՆՔՆԵՐ

17 հոկտեմբերի, 2016  
ԵՐԵՎԱՆ

# U.S. DECLARATION OF INDEPENDENCE – 240

*International Conference*

BOOK OF ABSTRACTS

October 17, 2016  
YEREVAN

## ԱՄՆ-Ի ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐ – 240

Ամերիկայի Միացյալ նահանգները տոնում է համաշխարհային պատմության մեջ ամերիկյան քաղաքական մշակույթի մեծագույն ներդրումներից մեկը հանդիսացող Անկախության հռչակագրի 240-ամյակը:

Յոչակելով Մեծ Բրիտանիայից անկախ նոր ինքնիշխան պետություն՝ Յիմնադիր հայրերը արտահայտեցին մարդու իրավունքների ու ազատությունների, ժողովրդի ինքնիշխանության այն հիմնարար գաղափարները, որոնք ամերիկացիների ազգային ինքնության և ամերիկյան պետականության կերտման կարևորագույն հիմնադրույթները դարձան: Անկախության հռչակագիրը դասվում է այն փաստաթղթերի շարքին, որոնք գերազանցել են նախնական նպատակը, որին միտված էին: Այն դարձել է լուրօրինակ ուղենիշ և խորհրդանիշ ազատության ձգտող ազգերի համար ամբողջ աշխարհում: Յոչակագիրը վերահաստատում է այն սկզբունքը, որ ոչ ոք չի կարող օրենքից բարձր լինել: Անկախության հռչակագրի տարեդարձը ԱՄՆ-ից բացի նշանավորում են ոչ միայն այն ժողովուրդներն ու պետությունները, որոնց ձևավորման վրա այն անմիջական ազդեցություն է գործել, այլև նրանք, ում համար ժողովրդավարության սկզբունքներն ու մարդու իրավունքները բարձրագույն արժեքներ են:

Գիտաժողովը նպատակ ունի դիտարկել Անկախության հռչակագիրը, նրա զարգացումները, մեկնաբանությունները և ազդեցությունները պատմագիտական, իրավագիտական, քաղաքագիտական, տեսական-հմաստասիրական լայն միջգիտակարգային (միջդիսցիպլինար) համատեքստում՝ 18-րդ դարավերջից մինչև արդիականություն:

## **U.S. Declaration of Independence – 240**

The United States of America is celebrating the 240<sup>th</sup> anniversary of the Declaration of Independence, one of the biggest contributions of American political culture to world history.

In declaring a new sovereign nation-state independent from Great Britain, the Founding Fathers expressed principles of human rights, freedom, and popular sovereignty, which became fundamental elements of the American identity and people.

The Declaration of Independence is one of those documents which have far exceeded its initial intent. It has become a symbol of the struggle for liberty. It reaffirms the principle that no one can be above the law. Alongside the U.S. this event is celebrated not only by those peoples and states on the formation of which the Declaration has had a direct impact, but also by those for whom democratic principles and human rights are highly valued. The Declaration of Independence is one of the benchmark documents for freedom-aspiring peoples all over the world.

This conference aims at addressing the U.S. Declaration of Independence's development, comments and influences in wider historical, constitutional, political contexts from the late 18<sup>th</sup> century to the present day.

*Չեկուլցների հակիրճանքներ*  
*Book of Abstracts*

**U.S. DECLARATION OF INDEPENDENCE.  
AN INTERPRETATION OF THE PREAMBLE USING  
THE WRITINGS OF  
JOHN LOCKE**

**Arpie Balian**

*PSIA Professor, AUA .*

This paper examines the Preamble of the U.S. Declaration of Independence (1776), analyzing the philosophical reasoning supporting the text and claiming attribution to English philosopher John Locke. The essay presents mirror texts showing that Jefferson derived the most famous ideas in the Declaration of Independence from the writings of English philosopher John Locke, especially from the *Second Treatise of Government* (1689). Case in point, Locke wrote that all individuals are equal and born with certain "inalienable" natural rights — emphasizing the inherent nature of those rights, but also that no others can deprive you of them. Among those rights, Locke identified "*life, liberty, and property.*" This is mirrored in the Declaration as "*life, liberty and the pursuit of happiness.*" By 'property' Locke meant more than just land and goods; property referred to ownership of one's self, including the right to one's well being, as well as the freedom of opportunity and duty.

*The Declaration also touches upon prudence in changing governments for causes that are temporary and passing for humans are able to withstand, "and accordingly all experience hath shewn, that mankind are more disposed to suffer, while evils are sufferable, than to right themselves by abolishing the forms to which they are accustomed."* The Declaration also touches upon the philosophical question of what to do with a government that does not perform well or one that has either overstepped its bounds and not fulfilling its purpose. This is established by Locke in his writings that governments are merely instituted to protect those rights beyond which government has no purpose in everyday life;

that governments simply are an extension of the people, and not a separate entity. The Declaration states that people have a right, not just a privilege, to alter or all-out abolish the government, provided that the reason for doing so is not "*light and transient*." For such a change or abolition to be warranted, there must be proof of a "*long train of abuses and usurpations*." This right to overthrow destructive governments was thought important to the Founders who stated it to be not just a right, but a duty of the people. Earlier, Locke wrote that the purpose of government is to secure and protect the inalienable rights of people. For their part, the people must obey the laws of their rulers. Thus, a sort of contract exists between the rulers and the ruled. But, Locke posited that if a government persecutes its people with abuses of power over an extended period, the people have the right to resist that government, alter or abolish it, and create a new government or even a new political system.



**Notes**

A series of horizontal dotted lines for writing notes.

## **AN OLD QUESTION: HOW REVOLUTIONARY WAS THE AMERICAN REVOLUTION**

**Jack N. Rakove**

*Professor of Political Science and (by courtesy) of Law,  
Stanford University.*

Scholars have never been quite certain about how to treat the American Revolution. On the one hand, in importance it certainly was as momentous as the famous upheavals in 18th-century France and 20th-century Russia and China. Yet in terms of the extent of social change and the use of violence, it was a very different kind of event. In this talk, I will defend the traditional proposition that the most revolutionary aspect of the Revolution was the remarkable innovations it developed in ideas and working practices of liberal constitutional government. There may be many reasons why other states would not want to create an American-style republic, but might still benefit from the procedures the American revolutionaries developed to adopt a constitution and make it fundamental law.



## **THE AMERICAN DECLARATION OF INDEPENDENCE AS A SYNTHESIS OF REVOLUTIONARY AND CONSERVATIVE IDEAS**

**Ambassador Tigran Mkrtchyan**

*Ph.D., Visiting Lecturer at the Department of World History, YSU.*

The debate over independence in America was very much about the traditional English laws that had been violated by the government in London. To substantiate their struggle against the imposition of taxes and against the use of forces by the British government the Americans used the example of the Glorious Revolution in England in 1688. But if in the latter case the violation of contract between the governor and governed could result in the ousting out of the governor by the governed, in the American case independence was the only option out. Revolution was the only way of defending traditional, ancient liberties inherited to English subjects not only after 1688, but much earlier, since the Great Charter (Magna Carta) 1215. In defense of their appeals, the Americans relied also on other sources as well, namely the Roman Republican thought. The principle of natural law, which had been defended by Cicero against its violators and “usurpers” of the Roman Republic of the 1st century BC was taken by the revolutionary founding fathers. Thus, simultaneously conservative and revolutionary ideas of government are adopted immediately at the creation of the American republic, much reflected in the Declaration of Independence. This dichotomy of the founding predetermined also the future development of the American political culture into two, democratic (liberal) and republican (conservative) traditions, which endure to this day.



## **THE AMERICAN REVOLUTION AND A CANDID WORLD**

**Robert J. Allison**

*Professor of History  
Suffolk University*

The American Revolution was an international event. The rebellious colonists were for the most part British, and rebelling against the British empire. But it was not merely a rebellion to establish their own right to govern themselves-it was a statement about the right of all people for self-government. The Declaration set a series of propositions before a “candid world,” including the proposition that the laws of nature and nature’s God entitle all people to an equal station in the world. The leaders of the Revolution drew their ideas from a shared body of Enlightenment philosophy, and the war to establish these ideas drew on the support of like-minded men and women from throughout the world.

Both sides-the British and the Americans-drew support from other countries. The British hired German mercenaries; the King of France sent an army and a fleet to the support of the Americans. From Europe and the West Indies. The successful American Revolution sparked uprisings against entrenched power in the Old World and the New.

**Notes:**

A series of horizontal dotted lines for writing notes.

ԱՄՆ. ԵՐՐՈՐԴ ՀՌՈՍ  
(Գաղափարներ, ժառանգություն, սիմվոլիզմ)

Արեգ Քոչինյան

*Երիտասարդ վերլուծաբանների հայաստանյան  
կենտրոնի հ/կ նախագահ*

Աշխատանքի նպատակն է ցույց տալ ԱՄՆ հիմնադիր հայրերի և ԱՄՆ հիմնադրման գործընթացների վրա եղած հռոմեական ազդեցությունը: Որն արտահայտվում էր ինչպես գաղափարների և ինստիտուտների կերտմամբ այնպես էլ ժամանակաշրջանի թողած ժառանգությամբ ու սիմվոլներով: Ուսումնասիրության առարկան է ԱՄՆ անկախության տեքստի և դրա օժանդակությունների մեջ վերծանվող հռոմեական ազդեցության ուսումնասիրումը: Աշխատանքը արդիական է և կարևոր արևմտյան քաղաքակրթության փոխակերպումները և թոյնբիական տերմինաբանության «քաղաքակրթական ալիքները» լավագույնս ներկայացնելու և մեր ժամանակների հզորագույն պետության ու իրավունքի առաջատար դարբնոցի համեմատությունը իր անտիկ նախորդի հետ համեմատելու համար: Չեղինակը ձգտելու է աշխատանքը վերածել պատմահամեմատական հոդվածի, հարուստ վերլուծական նյութով:

Բովանդակային առումով աշխատանքը կունենա հետևյալ մոտավոր տեսքը`

- 3-րդ Չոռմի գաղափարը մեր օրերում
- ԱՄՆ հիմնադիր հայրեր և հռոմեական ազդեցությունը նրանց վրա
- ԱՄՆ հիմնադիր փաստաթղթեր և Անկախության դեկլարացիա
- Հռոմեական ազդեցությունը ԱՄՆ հիմնադիր փաստաթղթերի և Անկախության դեկլարացիայի վրա



- ԱՄՆ և Հռոմ գաղափարաբանական նմանությունները արտահայտվող իրավունքի և քաղաքացու մասին պատկերացումներում
- Հռոմեական սիմվոլիզմը ԱՄՆ-ում
- Անկախության հռչակագիրը որպես հռոմեականության վերածնունդ

ԱՄՆ անկախության հռչակագիրը իր պատմության 240 տարիների ընթացքում դադարել է զուտ փաստաթուղթ կամ սիմվոլ լինելուց, այն անգամ այլևս զուտ ներշնչանքի կամ արտատպման աղբյուր չէ, այն ամերիկյան ինքնության բաղկացուցիչ մաս է, ինքնություն, որ չի ձևավորվել և չէր էլ կարող ձևավորվել դատարկ տեղում այլ իր ներքո ուներ հազարամյա արևմտյան (և հատկապես հռոմեական) քաղաքակրթության հիմքը:

**Notes:**

A series of horizontal dotted lines for writing notes.

**U.S. DECLARATION OF INDEPENDENCE:  
“PURSUIT OF HAPPINESS”  
(In perspective of Aristotle and Cicero)**

**Albert Stepanyan**

Professor, Doctor of Historical Sciences, President of the AAWH (NGO),  
Head of the Department of World History, Yerevan State  
University.

**Lilit Minasyan**

*Dr.*, Associate Professor of the Department of World History, YSU,  
Vice President of the AAWH.

Composing the document, the eminent fathers of the American independence emphasized their ideological connections with the antique thinkers. It was particularly true in their basic statement that men: “[...] are endowed by their Creator with certain unalienable rights, that among these are Life, Liberty and the pursuit of Happiness”. Aristotle and Cicero were named among most influential authors of the past.

In Aristotelian texts, the happiness was interpreted in the light of one of crucial concepts of his philosophical system, *completion (entelechy)*. It indicated the motion of every righte-ous thing to its genuine end which was thought to be identical with the universal order led by Natural (or Divine) Law. In social life, the completion was combined with the happiness of communities and human beings reached through high intellectual and moral virtues and relevant habits. The role of outstanding legislators and statesmen was appreciated by Aris-totle as key condition for social progress.

In Cicero’s texts, the concept of happiness was also linked with the Natural Law: “[...] the ultimate good of man is life in accordance with Nature”. The author proceeded from the Stoic theory, viewing in the Universe a republic (consisting of stars, planets, animals, men) led by Logos. Men are held as the main object of Logos emanation, and it is present in their soul as the reasonable part. As a result, virtues; “[...]”

spring from reason, the most divine element in man”. In communal life, the connection with Logos was brought about by outstanding statesmen, who, after death, dwelt in “a high place full of stars, shining and splendid”. They turn into the heavenly patrons of Rome personifying its basic virtues – *virtus*, *gravitas*, *dignitas*, *fides*, *clementia*. *Felicitas* (happiness) was assessed as a balance of them. According to Cicero, the best state form capable to secure the happiness of citizen was the republic with mixed government system uniting the elements of monarchy, aristocracy and democracy.



**ԱՄՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ ՈՐՊԵՏ  
ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ. ՁՈՒԳԱՅԵՌՆԵՐ ԼՂՀ  
ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿԱԳՐԻ ՀԵՏ**

**Մարիամ Մարգարյան**

*Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Քաղաքական  
կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի վարիչ*

Աշխատանքում դիտարկված է ԱՄՆ Անկախության հռչակագրի ազդեցությունը ինքնորոշման ձգտող և քաղաքական արդիականացման գործընթացում գտնվող քաղաքականության սուբյեկտների վրա:

Ամերիկյան հեղափոխությունը իր ազգային-ազատագրական նպատակներով՝ ուղղված ընդդեմ բրիտանական գաղութային ճնշման, և հաղթանակած ռազմական գործողությունների արդյունք՝ 1776 թ.-ի հուլիսի 4-ին ընդունված ԱՄՆ Անկախության Հռչակագիրը որոշիչ ազդեցություն է ունեցել և ունի անհատի, ժողովուրդների, հասարակությունների ինքնորոշման գործընթացների վրա: Վերջինս պայմանավորված է Հռչակագրում տեղ գտած ունիվերսալ արժեքների առկայությամբ, որոնց հիմքն ինքնորոշման գերակայնությունն է՝ *“Մենք հիմք ենք ընդունում ակնհայտ այն իսկությունից, որ բոլոր մարդիկ ստեղծված են հավասար և Արարչի կողմից օշտված են որոշակի անօտարելի իրավունքներով, որոնք են, մասնավորապես, կյանքի, ազատության և երջանկության ձգտումը: Մարդկանց այդ իրավունքները ապահովելու համար ստեղծվում են կառավարություններ, որոնք իրենց օրինական լիազորությունները իրականացնում են կառավարվողների համաձայնությամբ: Եթե այդ նպատակների իրականացման համար կառավարման որևէ ձևը դառնում է ազետայի, ապա ժողովուրդը իրավունք ունի փոխել կամ արձագել նրան՝ ստեղծելով նոր կառավարություն՝ հիմնված այնպիսի սկզբունքների և իշխանության կազմակերպման ձևի վրա, որոնք, ինչպես իրեն թվում է, ամենալավ ձևով կապահովեն մարդկանց անվտանգություն և երջանկություն”* (Declaration of

Independence, IN CONGRESS, July 4, 1776.

[http://www.constitution.org/us\\_doi.pdf](http://www.constitution.org/us_doi.pdf)):

Փաստորեն, Յոջակագիրը և, հատկապես, նշված դրույթը որպես բնական իրավունքի արդյունք պետության, անհատի և հասարակության ինքնորոշման իրավունքի հիմնք է: Դրանով իսկ Յոջակագիրը խոչնդոտ է հանդիսացել և հանդիսանում է անձի քաղաքական ազատության նկատմամբ պետական իշխանության կամայականությունների և սահմանափակումների համար:

Ուշագրավ է, որ ԱՄՆ Անկախության Յոջակագրի հեղինակներից Թ. Ջեֆերսոնը (ԱՄՆ 3-րդ նախագահ) գիտակցաբար Ջ. Լոկի "Կյանք, ազատություն, սեփականություն" դասական դարձած բանաձևում "սեփականություն" հասկացությունը փոխարինում է "երջանկություն" հասկացությամբ: "Երջանկություն" դարձավ ապագայի տեսլականի և ինքնորոշման ձգտող պետությունների, անհատների, հասարակությունների և ժողովուրդների համար գիտելիքի և ինովացիայի վրա հիմնված քաղաքական արդիականացման գերակա գործոն:

Այս դրույթը իր համամարդկային արժեքաբանությամբ հետագայում հնարավորություն տվեց ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնին հիմնավորել ժողովուրդների ինքնորոշման իրավունքի գերակայությունը միջազգային հարաբերություններում: Յենց դրանով էլ պայմանավորված է ԱՄՆ Անկախության Յոջակագրի գրավչությունը զարգացող նոր աշխարհաքաղաքում, քանի որ հիմնավորում է ազատության դրոշ բարձրացնելու և երջանիկ ապրելու անօտարելի իրավունքը:

Յետագայում ժողովուրդների ինքնորոշման իրավունքը դրվեց Միացյալ ազգերի կազմակերպության կանոնադրության հիմքում: Մասնավորապես, ՄԱԿ կանոնադրության 1-ին հոդվածի 2-րդ կետում նշված է, որ "...(Միավորված ազգերի կազմակերպության նպատակներն են) զարգացնել ազգերի բարեկամական հարաբերություններ՝ հիմնված ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հարգանքի վրա և այլ համապատասխան միջոցներ ձեռնարկել հանուն համընդհանուր խաղաղության ամրապնդման<sup>1</sup>": Իսկ ավելի ուշ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը տեղ գտավ 1975 թ. ԵԱՀԽ Յելսինկյան եզրափակիչ ակտում՝ "ժողովուրդների

<sup>1</sup> [http://www.un.org/res/UN%20Treaties/Charter\\_arm\\_unicode.pdf](http://www.un.org/res/UN%20Treaties/Charter_arm_unicode.pdf)

իրավահավասարության և ինքնորոշման իրավունքներ” կետով<sup>2</sup>:

Այսպիսով, հիմնվելով ԱՄՆ Անկախության Հռչակագրի վրա, նպատակահարմար ենք համարում հիմնավորել ԼՂՀ անկախությունը որպես ժողովուրդների ինքնորոշման իրավունքի կիրառում:

Պատմական անարդարությունը, որի սկիզբը դրվեց 1921 թ. հուլիսի 5-ի Կավբյուրոյի որոշմամբ, ավարտվեց 1988 թ. փետրվարի 20-ի “ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ տեղափոխելու հարցով Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ գերագույն խորհուրդների առջեւ միջնորդության մասին” ԼՂԻՄ մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանի որոշմամբ և 1991 թ. սեպտեմբերի 2-ի ԼՂՀ հռչակագրով, որի ներածականում (preamble), մասնավորապես, փաստարկված է ԼՂՀ ժողովուրդի անվտանգ և երջանիկ ապրելու ձգտումը:

Համեմատության մեջ ներկայացնելով ԱՄՆ Անկախության հռչակագիրը և ԼՂՀ Անկախության հռչակագիրը, հիմնավորվում է այն փաստը, որ ԱՄՆ Անկախության հռչակագրի հիմքում դրված ինքնորոշման իրավունքը որպես բնական իրավունք օրինակ է ծառայում մինչ այսօր երջանկության և անվտանգության ձգտող ժողովուրդների համար:

---

<sup>2</sup> <http://www.osce.org/hy/mc/39507?download=true>



**Notes**

Dotted lines for writing notes.

## **NATURAL POLITICS IN "THE SNARE OF GLORY" AND THE US DECLARATION OF INDEPENDENCE**

**Naré Hovhannisyan**

*BA Student,*

*American University of Armenia*

The communication aims at presenting the common philosophical ground of "The Snare of Glory" and The US Declaration of Independence.

"The Snare of Glory" (1773) was written as a constitution for the future Independent Armenia and published in Madras. Comprised of two parts– a historico-theoretical introduction and a constitution of the future Independent Armenia– this book is a compound result of Armenian politico-philosophical thought which reflects the politics of its time and finds itself in dialogue with mainly 17th-18th c. English political and philosophical theories.

The US Declaration of Independence (1776) was signed by the representatives of people of thirteen American colonies to break with British rule and form a new nation. Underneath this political announcement lay the self-evident laws of Nature.

A distinctive philosophical understanding of the Natural resonates in both political documents through the figure of English philosopher John Locke, whose principles, drawn out of the bosom of Nature, served (directly or indirectly) as a basis for Armenian thinkers to ground on their assertions of natural rights of freedom and equality. These and other natural rights were pivotal in the document of The Declaration of Independence, being simultaneously the ground from which the claims of Americans has risen and the end, for those claims to resound.

This paper undertakes to show the points of encounter of above mentioned documents while tracing the influence of English Enlightenment thought in both of them. It intertwines historically both Armenian and American political projects, presenting politics as a peculiar smithy of philosophical thought.



**ՆԵՐՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՈՆՍԵՆՍՈՒՄԻ  
ՎԵՐԱԾԱՐԱԴՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ ԵՎ ՀՈՌՄԻ  
ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ  
(Ընկրկումի և առաջընթացի սահմանագծին)**

**Նժդեհ Հովսեփյան**

*ԵՊՀ Պատմության ֆակուլտետ,  
Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ*

18-րդ դարի ավարտին ԱՄՆ Հիմնադիր հայրերը երկնելով իրենց պետության Անկախության հռչակագիրը՝ դրա հիմքում դնում էին ազատ կառավարման համակարգի և մրցակցային սոցիալական կացութաձևի հաստատման սկզբունքը: Հանդես գալով արքայի գործած հանցանքների հակառակ հավանե քննադատությամբ՝ Հիմնադիր հայրերը նաև ընդգծում էին սոցիալական միջավայրում արդարության ունահարման անընդունելիությունը՝ որպես պետության ներսում հավասարակշռության խախտման մերժելի արահետի: Հռչակագրի ընդունումից մոտ 130 տարի անց այլևս լիովին անկախ և ինքնիշխան Ամերիկայի Միացյալ Նահանգները բախվեց արդեն ներքին հակասությունների մանվածապատ թնջուկին: Անդադրում հզորացման ուղին բռնած տնտեսական-կորպորատիվ շահերը աստիճանաբար սկսում էին սպառնալ Հանրապետության ներսում հավասարակշռված անսասանությանը՝ սոցիալական տարաբնույթ խավերի միջև ստատուս-քվոյի խափանման առարկայական միտումներով: Այս առումով Միացյալ Նահանգներն ուներ իր պատմաքաղաքական վիթխարի նախնու՝ Հին Հռոմի կենսափորձը, որ 2000 տարի առաջ անցել էր գրեթե նույնպիսի մի դաժանագույն փորձությամբ միջով: Ահա, սույն ակնարկը նպատակ ունի մեկնաբանելու 20-րդ դարի մեկնարկին ԱՄՆ-ում գոյություն ունեցած ներհասարակական փոխհամաձայնության բնույթը, դրա հնարավոր խաթարման գործընթացը և պատմահամեմատական զուգահեռ անցկացնել Հռոմեական Հանրապետությանը պատուհասած նույնօրինակ փորձության հետ: Արձանագրելի է, որ նշյալ

Ժամանակահատվածում Միացյալ Նահանգների պետաքաղաքական ընտրախավին վիճակված էր հանդես գալ պատմական առաքելությամբ՝ իրավիճակը ընկալելով իբրև կազուս բեյի՝ ներամերիկյան կոնսենսուսի խախտմանը ձգտող մենաշնորհների ու խոշոր կորպորացիաների դեմ:



## ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱՎԱՐԳԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏԵՍԱԿԱՆԸ (Վոլդրո Վիլսոն)

### Կարեն Գասպարյան

*ԵՊՅ Համաշխարհային պատմության ամբիոնի դոցենտ,  
պատմ. գիտ. թեկնածու*

Ամերիկայի Միացյալ Նահանգներն այն եզակի պետություններից է, որի ստեղծման հիմքում դրված է մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությունը, ի դեմս «Անկախության հռչակագրի», «ԱՄՆ սահմանդրության» և «Իրավունքների մասին բիլլի»: Անկախության հռչակագիրը, որի համաձայն ամերիկյան գաղութները 1776 թ-ին դուրս եկան Բրիտանական կայսրության կազմից, հռչակում էր բոլոր մարդկանց հավասարությունը. «բոլոր մարդիկ ստեղծված են հավասար» (all men are created equal): Եվ, որ պակաս կարևոր չէ, հռչակագիրը հաստատում էր Արարչի կողմից մարդկանց տրված անօտարելի որոշակի իրավունքները, որոնց թվին պատկանում է կյանքը, ազատությունը և երջանկության ձգտումը (they are endowed by their Creator with certain unalienable Rights, that among these are Life, Liberty and pursuit of Happiness): Այս փաստաթուղթերը դարձան հիմքը ամերիկյան ժողովրդավարության, որի համաշխարհայնացման խնդիրը դարձավ ԱՄՆ արտաքին քաղաքական հայեցակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկը: Այս գործընթացի կարևոր համգամանքներից է այն, որ անկախ ամերիկյան արտաքին քաղաքական շահի հանգամանքային պահանջից, դա արվում էր աշխարհակարգային փոխակերպումների համատեքստում և հանուն մարդու (ազգերի) իրավունքների պաշտպանության և համընդհանուր խաղաղության հաստատման:

Վերոնշյալ համատեքստում անդրադառնալով 20-րդ դարասկզբի ԱՄՆ արտաքին քաղաքական ուղղությանը նշենք, որ

Առաջին աշխարհամարտի տարիներին նախագահ Վուդրո Վիլսոնը կազմակերպելով «խաչակրաց արշավանք հանուն մարդկության», հանդես եկավ ազգային ինքնորոշման և համաշխարհային հանրության կողմից «փոքրերի» պաշտպանության օգտին: Այս ամենը մարմնավորվեց Ազգերի լիգայի կանոնադրությամբ:

Նախագահ Վիլսոնի՝ Ազգերի լիգա ստեղծելու առաջարկը հանդիսանում էր շատ կարևոր ներդրում նոր աշխարհակարգի ստեղծման գործում: Վերջինս իր այդ քայլով փաստացի կանխագուշակեց «գաղափարական ներգրավումների» և «բազմաբնույթ պարտավորությունների» սկզբունքի վրա հիմնված միջպետական էականորեն նոր փոխհարաբերությունների ձևավորումը: Այն կոչված էր արմատապես փոխելու պետությունների փոխհարաբերությունները, ստեղծելու միանգամայն նոր մակարդակի և արդեն իրավական հարթության վրա գործող միջպետական փոխհարաբերությունների կարգավորման համակագ, որտեղ ազգերի հավասարությունը, որի առկայության դեպքում է միայն հնարավոր կառուցել կայուն խաղաղություն, պետք է արտահայտվի նրանց իրավահավասարության մեջ: Իրավունքը պետք է հենվի բոլոր ազգերի ընդհանուր հզորության վրա, ինչը կախված է ոչ թե մեկի գերակայությունից, այլ անվտանգության հանդեպ պատասխանատվության զգացումի հավաքական գիտակցումից. «Իրավունքը պետք է հիմնվի միավորված ուժի, այլ ոչ թե ազգի առանձին հզորության վրա... Ինքնին ենթադրվում է, որ անհնար է տարածքների կամ ռեսուրսների, ինչպես նաև, զարգացվածության մակարդակի հավասարություն: Սակայն ոչ ոք չի պահանջում ավելին, քան իրավահավասարություն: Մարդկությունը ցանկանում է ապրել ազատ, այլ ոչ թե զբաղվել միմյանց հզորության հավասարակշռմամբ»:

Այս տրամաբանությամբ ԱՄՆ հետախու ստանձնում էր իր ժողովրդավարական արժեքները և ազատությունը, որոնք բխում են պետականաստեղծ հիմնարար փաստաթղթերից («Անկախու-թյան հռչակագիր», «ԱՄՆ սահմանադրություն», «Իրավունքների մասին բիլլ»), աշխարհով մեկ տարածելու պարտավորությունը. «Մենք՝ ամերիկացիներս, ստեղծվել ենք որպես ազատ ազգ և նպատակների ու հայեցակարգերի



տեսանկյունից չենք սահմանափակվում միայն Ամերիկայով: Այժմ մեր խնդիրն է՝ ազատ ապրելու հնարավորություն ընձեռել համայն մարդկությանը, իսկ եթե դա մեզ չհաջողվի, ապա Միացյալ Նահանգ-ների փառքն ու հեղինակությունը կդառնան առ ոչինչ»:

A series of 28 horizontal dotted lines spanning the width of the page, providing a template for handwriting practice.